# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

**ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014**

«ՀՀ պետական պարտքի 2014թ. տարեկան հաշվետվությունը» հրատարակվել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Ա. Մարության, Ն. Գրիգորյանը, Մ. Հարությունյանը, Գ. Մալխասյանը, Ա. Եգանյանը, Վ. Դանիելյանը, Ս. Խանվելյանը, Ք. Խաչատրյանը, Հ. Ստեփանյանը, Ս. Մկրտչյանը, Ա. Համբարձումյանը, Գ. Վարդապետյանը, Մ. Մելիքյանը, Ս. Խալաթյանը:

## Բովանդակություն

Մակրոտնտեսական միջավայրը........................................................ 4
ՀՀ պետական պարտքը................................................................. 5
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը...................................... 9
ՀՀ կառավարության պարտքի սպասարկումը..................................... 10
Պետական պարտատոմսեր............................................................ 12
ՀՀ կառավարության վարկերը և փոխառությունները.............................. 18
Կանխիկ հոսքերի կառավարումը...................................................... 22
Ռիսկերի վերլուծությունը.............................................................. 24

## Հավելվածներ

Հավելված 1. Պետական պարտատոմսերով կատարված գործարքները 2014թ. 33

Հավելված 2. 2014թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերը ................................ 38

Հավելված 3. Պետական (գանձապետական) պարտատոմսերի մանրածախ շուկան 2014թ-ին ......................................................... 40

Հավելված 4. 2014թ. ընթացքում ՀՀ կառավարության ներգրաված վարկերի գծով իրականացված գործառնությունները............. 43

Հավելված 5. 2014թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի ներգրաված վարկերի գծով իրականացված գործառնությունները............. 44

Հավելված 6. 2014թ. արտաքին վարկատուների հետ կնքված նոր վարկային համաձայնագրերը................................................ 45

Հավելված 7. ՀՀ կառավարության կողմից տրամադրված և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող երաշխիքները............. 49

Պետական (գանձապետական) պարտատոմսերի առաջնային շուկայի Գործակալները ...................................................................... 50

# Հապավումներ

| | |
|---|---|
| *ՆՊՊ* | *Ներքին պետական պարտք* |
| *ԱՊՊ* | *Արտաքին պետական պարտք* |
| *ՊՊ* | *Պետական պարտատոմսեր* |
| *ՊԿՊ* | *Պետական կարճաժամկետ պարտատոմսեր* |
| *ՄԺՊ* | *Միջին ժամկետայնության պարտատոմսեր* |
| *ԵՊ* | *Երկարաժամկետ պարտատոմսեր* |
| *ԽՊ* | *Խնայողական պարտատոմսեր* |
| *ԳՊ* | *Գանձապետական պահառու* |
| *ՀՆԱ* | *Համախառն ներքին արդյունք* <br> *(2015թ.-ից ՀՆԱ ցուցանիշը ՀՀ ԱՎԾ-ի կողմից հաշվարկվում է համաձայն Ազգային հաշիվների համակարգ 2008 (ԱՀՀ 2008) միջազգային ստանդարտի: Ըստ ԱՀՀ 2008-ի վերանայվել են 2012-2014թթ. ՀՆԱ ցուցանիշները և համադրելի չեն 2000-2011թթ. ՀՆԱ ցուցանիշների հետ, որոնք հաշվարկված են համաձայն Ազգային հաշիվների համակարգ 1993 (ԱՀՀ 1993) ստանդարտի:)* |
| *ԶՆԱ* | *Զուտ ներկա արժեք* |
| *ՄԺԾԾ* | *Միջնաժամկետ ծախսերի ծրագիր* |
| *ԳՄՀ* | *Գանձապետական միասնական հաշիվ* |
| *ՀՀ ՖՆ* | *Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն* |
| *ՀՀ ԿԲ* | *Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ* |
| *ՄՖԿ* | *Միջազգային ֆինանսական կազմակերպություններ* |
| *ՕՊ* | *Օտարերկրյա պետություններ* |
| *ԵՄ* | *Եվրոպական միություն* |
| *ՎԶՄԲ* | *Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ* |
| *ԶՄԸ* | *Զարգացման Միջազգային Ընկերակցություն* |
| *ՎԶԵԲ* | *Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ* |
| *ԵՆԲ* | *Եվրոպական Ներդրումային Բանկ* |
| *ԳԶՄՀ* | *Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ* |
| *ՕՊԵԿ* | *ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ* |
| *ԱԶԲ* | *Ասիական Զարգացման Բանկ* |
| *ԱՄՀ* | *Արժույթի Միջազգային Հիմնադրամ* |
| *ԾԻԳ* | *Ծրագրերի իրականացման գրասենյակ* |

## Մակրոտնտեսական միջավայրը

ՀՀ-ում 2014 թվականի առաջին երեք եռամսյակների ընթացքում տնտեսական աճը արագացման միտումներ էր դրսևորել՝ երրորդ եռամսյակում աճելով 5.3%-ով, սակայն տարեվերջին տնտեսական աճի տեմպն էապես դանդաղեց և տարեկան աճը կազմեց 3.5%՝ կրելով արտաքին պահանջարկի աճի տեմպերի դանդաղման, փոխարժեքի արժեզրկման, Ռուսաստանից ներհոսող դրամական փոխանցումների կրճատման արդյունքում տնօրինվող եկամտի աճի տեմպերի դանդաղման ազդեցությունը:

2014 թվականին ապրանքների և ծառայությունների դոլարային արտահայտությամբ արտահանումը աճել է 2.7 %-ով, իսկ ներմուծումը՝ 0.4 %-ով: Արտահանման աճի հետ մեկտեղ 2.8 %-ով աճել են նաև սկզբնական եկամուտները:

2014 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցավ դրամի արագ տեմպերով արժեզրկում, ինչի արդյունքում 2014 թվականի դեկտեմբեր ամսին փոխարժեքը կազմեց 463.53 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց: Նախորդ տարվա դեկտեմբերին ձևավորված միջին փոխարժեքի (405.32) նկատմամբ արժեզրկումը կազմել է 12.6 %-ով:

2014 թվականի տարեվերջին 12-ամսյա գնաճը կազմել է 4.6%:

Հարկաբյուջետային քաղաքականության մոտեցումը եղել է բազմակողմ և միաժամանակ հավասարակշռված: Նպատակ է դրվել չափավոր նպաստել տնտեսության վերականգնմանը, որի պայմաններում չի խաթարվի մակրոտնտեսական և հարկաբյուջետային կայունությունը: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 6.9%, իսկ հարկային եկամուտներինը՝ 6.3%:

2014 թվականին իրականացված հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա ունեցել է ընդլայնող ազդեցություն: 2014 թվականին պետական բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 1.9%-ը, նախորդ տարվա 1.6%-ի համեմատ:

Այս պայմաններում կառավարությանը հաջողվել է պահպանել պարտքի կայունության ամրապնդման միտումը՝ նվազեցնելով հիմնական ռիսկերը: Պետական պարտքի վերաբերյալ պատմական տվյալները հասանելի են ՀՀ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում (www.minfin.am):

## ՀՀ պետական պարտքը

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 2109.6 մլրդ դրամ կամ 4441.5 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա համեմատ դրամով արտահայտված պարտքի ծավալն աճել է 248.3 մլրդ դրամով և միևնույն ժամանակ դոլարային արտահայտությամբ այն նվազել է 147.0 մլն ԱՄՆ դոլարով, որը բացատրվում է տարեվերջին դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի զգալի արժեզրկմամբ:

**Աղյուսակ 1. Հայաստանի Հանրապետության պետական պարտքը**

| | 31.12.2013 | | 31.12.2014 | |
|---|---|---|---|---|
| | % ՀՆԱ-ի նկատմամբ | մլրդ դրամ | % ՀՆԱ-ի նկատմամբ | մլրդ դրամ |
| ***ՀՀ պետական պարտք*** | ***40.9*** | ***1,861.3*** | ***43.6*** | ***2,109.6*** |
| որից | | | | |
| **ՀՀ կառավարության պարտք** | **36.3** | **1,655.1** | **39.2** | **1,900.6** |
| այդ թվում՝ | | | | |
| *արտաքին պարտք* | *30.2* | *1,375.4* | *32.8* | *1,588.9* |
| այդ թվում՝ | | | | |
| վարկեր և փոխառություններ | | 1,092.7 | | 1,275.3 |
| ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր | | 0.7 | | 0.4 |
| ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր | | 282.0 | | 313.1 |
| Արտաքին երաշխիքներ* | | - | | |
| *ներքին պարտք* | *6.1* | *279.6* | *6.4* | *311.7* |
| այդ թվում՝ | | | | |
| վարկեր և փոխառություններ | | 3.2 | | 1.9 |
| ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր | | 273.5 | | 289.4 |
| ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր | | 1.9 | | 19.4 |
| ներքին երաշխիքներ | | 1.0 | | 1.0 |
| **ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք** | **4.5** | **206.2** | **4.3** | **209.0** |
| որից | | | | |
| ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր | | 58.3 | | 71.2 |

*ՀՀ կառավարության արտաքին երաշխիքները տրամադրվել են ՀՀ կենտրոնական բանկի վարկերի գծով և կրկնահաշվարկից խուսափելու նպատակով արտացոլված են ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի մեջ*

Հիմք ընդունելով <<Պետական պարտքի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերը, համաձայն որոնց ներքին պետական պարտքը Հայաստանի Հանրապետության անունից ՀՀ ռեզիդենտների, իսկ արտաքին պետական պարտքը ՀՀ ոչ ռեզիդենտների և օտարերկրյա պետությունների հանդեպ փոխառության կամ վարկային պայմանագրերի հիման վրա ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների

հանրագումարն է, հաշվետվության մեջ տվյալները ներկայացվել են հաշվի առնելով ոչ թե ստանձնված պարտավորության արժույթը, այլ այն տիրապետողների ռեզիդենտության հանգամանքը:

**Գծապատկեր 1. ՀՀ պետական պարտքի և պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշների դինամիկան**




Պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 43.6%՝ ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2015-2017թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված 42.6%-ի փոխարեն, որը պայմանավորված է դրամով արտահայտված պարտքի ծավալի ծրագրայինից բարձր լինելու հանգամանքով:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2015-2017թթ. ռազմավարական ծրագրով նախատեսվում էր, որ ՀՀ կառավարության պարտքը 2014թ. վերջում չպետք է գերազանցեր 1,778.6 միլիարդ դրամը կամ ՀՆԱ 38.5 տոկոսը: Սակայն, ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2014թ. վերջին կազմել է 39.2%՝ ավել լինելով ծրագրային ցուցանիշից 0.7 տոկոսային կետով: ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի ծրագրայինից բարձր լինելը բացատրվում է ՀՀ կառավարության պարտքի 2014թ. ծրագրային ցուցանիշից 122 մլրդ-ով ավելի լինելու հանգամանքով, որը կավելացներ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2.7 տոկոսային կետով, եթե ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշը կազմեր այնքան, որքան ծրագրվել էր: Սակայն, քանի որ ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշը ևս ավելին է եղել ծրագրայինից, ապա ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը ծրագրայինից ավել է եղել ընդամենը 0.7 տոկոսային կետով:

2014թ. ներքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների հաշվին ՀՀ պետբյուջեի դեֆիցիտը ֆինանսավորվել է 15.03 մլրդ դրամով, իսկ արտաքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների հաշվին՝ 68.8 մլրդ դրամով:

**Աղյուսակ 2. Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը զուտ փոխառու միջոցների հաշվին**

| *(մլրդ դրամ)* | 2013 փաստ | 2014 ծրագիր | 2014 ճշտված ծրագիր | 2014 փաստ |
|---|---|---|---|---|
| Ներքին աղբյուրներ | 18.81 | 16.4 | 15.03 | 15.03 |
| Արտաքին աղբյուրներ | 124.64 | 67.4 | 84.6 | 68.8 |

2014թ. զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների) դեֆիցիտի ֆինանսավորման 2015-2017թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով նախատեսված և 2014թ. ՀՀ պետական բյուջեով հաստատված ծրագրային ցուցանիշները տարվա ընթացքում ճշգրտվել են՝ պայմանավորված հիմնականում արտաքին աղբյուրների հաշվին լրացուցիչ բյուջետային աջակցության երկու վարկերի (ՎԶՄԲ-ի Զարգացման քաղաքականության 2-րդ վարկ և ԱԶԲ-ի Ենթակառուցվածքների կայունության օժանդակության վարկ) ստացմամբ: Արդյունքում նվազեցվել է ներքին աղբյուրներից զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների) դեֆիցիտի ֆինանսավորման ծավալը և ավելացվել է արտաքին աղբյուրներից զուտ փոխառու միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման ծավալը: Արտաքին աղբյուրների հաշվին ճշգրտված ծրագրի և փաստացի կատարողականի ցուցանիշների շեղումը պայմանավորված է ԾԻԳ-երի կողմից ծրագրերի թերակատարումներով:

Ինչ վերաբերում է 2014թ. ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող ցուցանիշներին, ապա դրանք ունեցել են հետևյալ տեսքը՝

**Գծապատկեր 2. ՀՀ արտաքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները**



Նախորդ տարվա համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի ԶՆԱ/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 8.0 տոկոսային կետով, ՀՀ արտաքին պետական պարտքի ԶՆԱ/Արտահանում ցուցանիշը նվազել է 46.4 տոկոսային կետով և ՀՀ արտաքին պետական պարտք/Արտահանում ցուցանիշը նվազել է 27.8 տոկոսային կետով: Վերը նշված ցուցանիշների բարելավումը պայմանավորված է նաև նրանով, որ ԱՄՀ-ի հետ գործող ծրագրին համապատասխան 2014թ. փոփոխվել է արտաքին պետական պարտքի ԶՆԱ-ի հաշվարկման մեթոդաբանությունը և որպես զեղջման տոկոսադրույք է կիրառվել 5% դրույքաչափը:

## ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 440.0 մլն ԱՄՆ դոլար (209.0 մլրդ դրամ) կամ ՀՆԱ-ի 4.3%-ը: Նախորդ տարեվերջի համեմատությամբ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ նվազել է 13.4%-ով, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ՝ 0.2 տոկոսային կետով:

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի կառուցվածքում աճել է ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկերի տեսակարար կշիռը, որոնք, համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի, հաշվառվում են ՀՀ կենտրոնական բանկի պարտքի մեջ: Այսպես, եթե 2013 թվականի վերջի դրությամբ այդ վարկերի կշիռը կազմել է 28.3% (143.8 մլն ԱՄՆ դոլար), ապա 2014 թվականի տարեվերջին՝ 34.1% (149.9 մլն ԱՄՆ դոլար):

Պարտքի կառուցվածքում գերակշռում են Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) կողմից տրամադրված վարկերը, որոնց տեսակարար կշիռը 2014 թվականին նվազել է՝ կազմելով 65.9% (290.0 մլն ԱՄՆ դոլար)՝ 2013 թվականի 71.7%-ի (364.5 մլն ԱՄՆ դոլար) դիմաց:

**Աղյուսակ 3. ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի կառուցվածքը**

| | Առ 31.12.2013թ. | | Առ 31.12.2014թ. | |
|---|---|---|---|---|
| | մլն ԱՄՆ դոլար | % | մլն ԱՄՆ դոլար | % |
| **ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք** | **508.3** | **100.0** | **440.0** | **100.0** |
| *այդ թվում* | | | | |
| *ըստ վարկատուների* | | | | |
| *Միջազգային կազմակերպություններ, որից* | *414.5* | *81.6* | *347.0* | *78.9* |
| Արժույթի Միջազգային Հիմնադրամ | 364.5 | 71.7 | 290.0 | 65.9 |
| Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ | 50.0 | 9.8 | 49.4 | 11.2 |
| Ասիական Զարգացման Բանկ (ADB) | - | - | 7.6 | 1.7 |
| *Օտարերկրյա պետություններ* | *93.8* | *18.4* | *93.0* | *21.2* |
| Գերմանիա (KfW) | 93.8 | 18.4 | 93.0 | 21.2 |
| ըստ տոկոսադրույքի | | | | |
| ֆիքսված տոկոսադրույքով | 170.0 | 33.5 | 161.2 | 36.6 |
| լողացող տոկոսադրույքով | 338.2 | 66.5 | 278.8 | 63.4 |
| ըստ արժույթի | | | | |
| SDR | 364.5 | 71.7 | 297.6 | 67.6 |
| USD | 50.0 | 9.8 | 49.4 | 11.2 |
| EUR | *93.8* | *18.4* | *93.0* | *21.2* |

2014թ. <<Extended Fund Facility – EFF ծրագրի>> շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկի և Արժույթի Միջազգային Հիմնադրամի միջև ստորագրվել է 82.21 մլն SDR-ի վարկային պայմանագիր, իսկ <<Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագրի>> շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկի և Եվրոպական Ներդրումային Բանկի միջև՝ 62.3 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր:

2014թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկն արտաքին աղբյուրներից ստացել է 61.7 մլն ԱՄՆ դոլարի փոխառու միջոցներ: Միաժամանակ, արտաքին պարտքի գծով վճարումները կազմել են 103.3 մլն ԱՄՆ դոլար, որից տոկոսավճարները՝ 4.5 մլն ԱՄՆ դոլար, իսկ մայր գումարի մարումները՝ 98.8 մլն ԱՄՆ դոլար:

## ՀՀ կառավարության պարտքի սպասարկումը

2014թ. ՀՀ կառավարությունը ժամանակին և ամբողջ ծավալով կատարել է տոկոսավճարների գծով ստանձնած իր պարտավորությունները:

**Աղյուսակ 4. ՀՀ կառավարության պարտքի գծով տոկոսավճարները**

| *(մլրդ դրամ)* | 2013 փաստ | 2014 ծրագիր | 2014 ճշտված ծրագիր | 2014 փաստ |
|---|---|---|---|---|
| **Տոկոսավճարներ** | **46.73** | **63.38** | **62.33** | **61.64** |
| որից | | | | |
| *ներքին պարտքի գծով* | 29.9 | 33.23 | 33.23 | 33.05 |
| *արտաքին պարտքի գծով* | 16.82 | 30.15 | 29.10 | 28.59 |

2014թ. ՀՀ կառավարության պարտքի գծով տոկոսավճարները կազմել են 61.64 միլիարդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 31.9%-ով, որը պայմանավորված է պարտքի ծավալի աճով, ինչպես նաև կառավարության արտաքին պարտքի գործիքակազմի փոփոխություններով: 2015-2017թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով նախատեսված ՀՀ կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարների ծրագիրը հաշվետու տարվա ընթացքում ճշգրտվել է, որի արդյունքում այն նվազեցվել է 1 մլրդ դրամով՝ ի հաշիվ 6-ամսյա ԱՄՆ դոլարով LIBOR-ի, 6-ամսյա EURIBOR-ի, SDR-ի տոկոսադրույքների կանխատեսումային և 2014թ. ընթացքում ձևավորված փաստացի դրույքաչափերի տարբերության, ինչպես նաև արտաքին վարկերի գծով ստացումների ծրագրի թերակատարման:

Ներքին պարտքի համեմատ՝ արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը փոքր ծավալ են կազմում, քանի որ պարտքի կառուցվածքում դեռևս մեծ տեսակարար կշիռ ունեն արտաքին աղբյուրներից արտոնյալ պայմաններով ներգրաված վարկերը: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային ֆինանսական կառույցների կողմից Հայաստանը դասվում է միջին եկամուտ ունեցող երկրների շարքին, առաջիկա տարիներին նման վարկերն ավելի քիչ հասանելի են լինելու: Բացի այդ, պարտքի կառուցվածքում ավելանում են նաև միջազգային կապիտալի շուկաներից արտարժութային պարտատոմսերի թողարկման միջոցով շուկայական պայմաններով փոխառու միջոցների ներգրավման ծավալները: Արդյունքում առաջիկա տարիներին  ավելանալու են արտաքին պարտքի սպասարկման ծախսերը:

**Գծապատկեր 3. ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը բնութագրող ցուցանիշները**




ՀՀ արտաքին պետական պարտքի գծով վճարումներ/Արտահանում և ՀՀ արտաքին պետական պարտքի գծով վճարումներ/Պետբյուջեի եկամուտներ ցուցանիշները նախորդ տարվա համեմատ էապես նվազել են՝ համապատասխանաբար 23.4 և 23.3 տոկոսային կետով, քանի որ վճարումների ծավալը 2013թ. անհամեմատ մեծ է եղել՝ պայմանավորված Ռուսաստանի Դաշնության հանդեպ ունեցած պարտքի վաղաժամկետ մարմամբ: Ինչ վերաբերում է ՀՀ արտաքին պետական պարտքի տոկոսավճար/Արտահանում ցուցանիշին, ապա այն 2013թ. համեմատ աճել է 0.4 տոկոսային կետով:

## Պետական պարտատոմսեր

ՊՊ-երի թողարկումները ծրագրավորվել են այնպես, որպեսզի պետական բյուջեի հոսքերը տարվա ընթացքում լինեն ավելի հավասարաչափ բաշխված: Տարվա ընթացքում բյուջեի պակասուրդի ամսական և աճողական տվյալները ներկայացված են աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 5. ՊՊ-երի միջոցով բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ըստ ամիսների (մլն դրամ)**

| | Ամսական | | Կուտակային (աճողական) | |
|---|---|---|---|---|
| | 2013 | 2014 | 2013 | 2014 |
| **Հունվար** | 3,768 | 1,385 | 3,768 | 1,385 |
| **Փետրվար** | 1,030 | 1,933 | 4,798 | 3,318 |
| **Մարտ** | (6,734) | (3,736) | (1,937) | (418) |
| **Ապրիլ** | 3,328 | (9,718) | 1,392 | (10,137) |
| **Մայիս** | 19 | 5,392 | 1,410 | 4,745 |
| **Հունիս** | 3,265 | 6,341 | 4,675 | 1,596 |
| **Հուլիս** | 5,728 | (8,134) | 10,403 | (6,538) |
| **Օգոստոս** | 5,845 | 4,340 | 16,248 | (2,198) |
| **Սեպտեմբեր** | 3,735 | 8,285 | 19,983 | 6,087 |
| **Հոկտեմբեր** | (4,715) | 4,431 | 15,268 | 10,517 |
| **Նոյեմբեր** | 2,620 | 4,943 | 17,888 | 15,461 |
| **Դեկտեմբեր** | 2,539 | 1,194 | 20,427 | 16,655 |

**Գծապատկեր 4. ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ամսական և կուտակային ֆինանսավորումը (մլրդ դրամ)**




Հետևելով ՀՀ 2014թ. պետական բյուջեի պակասուրդի կուտակային ֆինանսավորման դինամիկային, երևում է, որ պակասուրդի ֆինանսավորումը կայուն կերպով սկսել է աճել երկրորդ կիսամյակում: Դա պայմանավորված է հիմնականում տարվա երկրորդ կիսամյակում պակասուրդի ֆինանսավորման մեջ ՊԿՊ-երի տեղաբաշխումների գրեթե ամբողջ ծավալի ներառմամբ:

Ներքին շուկայից ներգրավված և շրջանառության մեջ եղած պարտավորությունների ծավալը 2014թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 289.9 մլրդ դրամ: ՊՊ-երի կառուցվածքը հետևյալն է՝ 4.3% - ՊԿՊ-եր, 52.0% - ՄԺՊ-եր, 43.3% - ԵՊ-եր և 0.4% - ԽՊ-եր:

**Աղյուսակ 6. Ներքին շուկայից ներգրաված և շրջանառության մեջ գտնվող միջոցների կառուցվածքը**

| (մլրդ դրամ) | 2013 | 2014 |
| --- | --- | --- |
| ՊԿՊ | *22.89* | *12.50* |
| ՄԺՊ | *147.38* | *150.85* |
| ԵՊ | *102.85* | *125.47* |
| ԽՊ | *1.06* | *1.07* |
| **Ընդամենը պարտատոմսեր** | **274.18** | **289.89** |

2014թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի կառուցվածքն ըստ մարմանը մնացած օրերի հետևյալն է՝

| | |
|---|---|
| **մինչև 1 տարի** | **20%** |
| **1-5 տարի** | **46%** |
| **5-ից ավելի տարի** | **34%** |

Հավելված 2-ում ներկայացված է տեղեկատվություն շրջանառության մեջ գտնվող ՊՊ-երի վերաբերյալ:

2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 2003 օր՝ 2013 թվականի դեկտեմբերի 30-ի 1901 օրվա դիմաց, իսկ միջին կշռված եկամտաբերությունը՝ համապատասխանաբար 13.49% և 13.96%: Տարվա ընթացքում պետական պարտատոմսերի ժամկետայնության երկարացմանը և միևնույն ժամանակ եկամտաբերության նվազմանը հիմնականում նպաստել է 2014 թվականի համար ներքին զուտ փոխառու միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կրճատված ծրագրի հաստատումը, ինչպես նաև թողարկողի նկատմամբ վստահության ամրապնդումը, որն արդյունք է ՀՀ ՖՆ-ն կողմից իրականացրած ՊՊ-երի թողարկումների բաց ու թափանցիկ քաղաքականության:

**Գծապատկեր 5. ՊՊ-ի եկամտաբերության և ժամկետայնության դինամիկան 2014թ.**



**Գծապատկեր 6. ՊՊ-երի կառուցվածքն ըստ թողարկման ժամկետի 2014թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ**




1.5%-ով ավելացել է ՀՀ ՖՆ-ի կողմից թողարկվող և պետական (գանձապետական) պարտատոմսերի մանրածախ շուկայում ԳՊ համակարգի միջոցով տեղաբաշխվող պետական խնայողական պարտատոմսերի ծավալը՝ կազմելով 1,074.3 միլիոն դրամ: 2014թ. պետական (գանձապետական) պարտատոմսերի մանրածախ շուկայում իրականացված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 3-ում:

Շրջանառության մեջ գտնվող ՊՊ-երի ծավալի աճին զուգահեռ ավելանում են նաև դրանց մարման հետ կապված վճարումները և սպասարկման ծախսերը: 2014թ. ապրիլ և հուլիս ամիսներին կատարված մեծ ծավալով վճարումներն արդյունք են այդ ժամանակահատվածներում կատարված ուղենշային պարտատոմսերի մարումների, իսկ փետրվար, ապրիլ, օգոստոս և հոկտեմբեր ամիսների սպասարկման ծախսերի մեծ ծավալները հիմնականում պայմանավորված են թողարկված ուղենշային պարտատոմսերի սպասարկման հետ:

**Աղյուսակ 7. ՊՊ-երի մարումների և սպասարկման ծախսերի բաշխվածությունը տարվա ընթացքում (մլն դրամ)**

| | Մարում | | Սպասարկում | |
|---|---|---|---|---|
| | 2013 | 2014 | 2013 | 2014 |
| **Հունվար** | 5,331 | 4,255 | 986 | 1,160 |
| **Փետրվար** | 8,386 | 5,737 | 4,786 | 6,337 |
| **Մարտ** | 17,034 | 5,192 | 1,547 | 1,157 |
| **Ապրիլ** | 5,325 | 14,440 | 5,984 | 7,482 |
| **Մայիս** | 7,280 | 2,767 | 229 | 196 |
| **Հունիս** | 4,930 | 4,823 | 199 | 415 |
| **Հուլիս** | 2,788 | 15,301 | 1,094 | 915 |
| **Օգոստոս** | 3,853 | 4,050 | 5,733 | 6,539 |
| **Սեպտեմբեր** | 6,188 | 2,411 | 1,044 | 898 |
| **Հոկտեմբեր** | 12,082 | 1,503 | 7,310 | 7,677 |
| **Նոյեմբեր** | 2,904 | 1,060 | 232 | 40 |
| **Դեկտեմբեր** | 7,592 | 1,421 | 586 | 130 |
| **Ընդամենը** | **83,693** | **62,960** | **29,730** | **32,946** |

ՀՀ կառավարության կողմից իրականացվող ուղենշային ՊՊ-երի թողարկման քաղաքականության արդյունքում ՊՊ-երի մարումները հիմնականում կենտրոնացվում են ապրիլ և հոկտեմբեր ամիսներին, երբ համեմատաբար բարձր են պետական բյուջեի եկամուտները: Այսպես, միջին ժամկետ պարտատոմսերի մարումները կիրականացվեն տարվա առաջին կեսին, իսկ երկարաժամկետ պարտատոմսերինը՝ տարվա երկրորդ կեսին:

2014թ. ընթացքում պետական պարտատոմսերով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հաշվետվության հավելված 1-ում:

### Պետական պարտատոմսերի երկրորդային շուկան

Պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում գործարքների քանակը նախորդ տարվա համեմատ ավելացել է 452-ով, իսկ գործարքների ծավալը նվազել է 30.1%-ով՝ հասնելով 154.0 մլրդ դրամի: Գործարքների միջին օրական ծավալը 888.5 մլն դրամից նվազել է մինչև 615.8 մլն դրամի: Նվազել է գործարքների ընդհանուր ծավալում ՀՀ ԿԲ գործարքների ծավալը՝ 2.9%-ից հասնելով 0.6%-ի: NasdaqOMX-Armenia-ի առևտրային հարթակում կատարվող գործարքների ծավալն աճել է մոտ 2.2 անգամ: Երկրորդային շուկայում կատարված գործարքների հիմնական բնութագրերը ներկայացված են ստորև:

**Աղյուսակ 8. Երկրորդային շուկայում պետական պարտատոմսերով կատարված գործարքների հիմնական բնութագրերը**

| | 2013 | 2014 |
|---|---|---|
| **Գործարքների ընդհանուր քանակը (հատ)** | **1583** | **2035** |
| **Գործարքների ընդհանուր ծավալ (մլրդ դրամ), որից՝** | **220.3** | **154.0** |
| արտաբորսայական | *199.1* | *119.6* |
| բորսայական | *14.8* | *32.2* |
| ՀՀ ԿԲ կողմից իրականացված | *6.4* | *0.9* |
| **Երկրորդային շուկայի ցուցանիշները** | | |
| Կատարված բոլոր գործարքների միջին կշռված եկամտաբերությունը՝ (%) | 12.66 | 10.43 |
| Միջին կշռված ժամկետայնությունը (օր) | 3247 | 2786 |
| Միջին օրական ծավալը (մլն դրամ) | 888.5 | 615.8 |
| Գործարքների միջին օրական քանակը (հատ) | 6 | 8 |

## ՀՀ կառավարության վարկերը և փոխառությունները

2014թ. ընթացքում ստորագրվել են 22 նոր վարկային համաձայնագրեր (տես հավելված 5): Նախորդ տարվա համեմատ ՀՀ կառավարության վարկերն ու փոխառությունները նվազել են 0.5%-ով, որտեղ տարվա կտրվածքով աճել են Եվրոպական ներդրումային բանկից, ԱԶԲ-ից, ՎԶՄԲ-ից ստացված փոխառու միջոցների մասնաբաժինները և միևնույն ժամանակ նվազել են ԱՄՆ-ի, Ճապոնիայի, ՎԶԵԲ-ի, ԵՄ-ի, ԱՄՀ-ի, ՁՄԸ-ի մասնաբաժինները:

***Գծապատկեր 7. ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների կառուցվածքն ըստ վարկատուների 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ***




Նախորդ տարվա համեմատ 4.3%-ով աճել է ԱՄՆ դոլարով ստացված վարկերի մասնաբաժինը, ինչը պայմանավորված է 113.3 մլն ԱՄՆ դոլարով վարկերի զուտ ծավալի աճով: SDR-ով և ճապոնական իենով ստացված վարկերի մասնաբաժինները նվազել են համապատասխանաբար 3.1%-ով և 1.4%-ով, որի պատճառ են հանդիսացել ինչպես SDR-ով

տրամադրված ԱՄՀ և ճապոնական իենով տրամադրված վարկերի մարումները, այնպես էլ ԱՄՆ դոլարի նկատմամբ SDR-ի և JPY-ի փոխարժեքների փոփոխության ազդեցությունը[1]:

**Գծապատկեր 8. ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների արժութային կառուցվածքը 1999-2014թթ**




**Գծապատկեր 9. ԱՄՆ դոլարի նկատմամբ SDR-ի, EUR-ի, JPY-ի միջին ամսական փոխարժեքների դինամիկան**




---

[1] 31.12.2013թ. դրությամբ 1 SDR = 1.540 USD, 1 EUR = 1.38 USD, 1 JPY = 0.010 USD
31.12.2014թ. դրությամբ 1 SDR = 1.449 USD, 1 EUR = 1.216 USD, 1 JPY = 0.008 USD

2014 թվականի ընթացքում ՀՀ կառավարության կողմից արտաքին աղբյուրներից ներգրավված վարկային միջոցների կառուցվածքում 46.8%-ը կազմել են լողացող տոկոսադրույքով վարկերի գծով կատարված մասհանումները, իսկ 53.2%-ը՝ ֆիքսված: 2014թ. վերջի դրությամբ ՀՀ կառավարության վարկերի ու փոխառությունների կառուցվածքում լողացող տոկոսադրույքով վարկերի մասնաբաժինը կազմել է 16.1%՝ նախորդ տարվա 14.1%-ի փոխարեն:

**Գծապատկեր 10. ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների կառուցվածքն ըստ վարկի տոկոսադրույքի 1999-2014թթ.**




Լողացող տոկոսադրույքով վարկերի տոկոսադրույքի հաշվարկման հիմքում ընկած են Libor և Euribor տոկոսադրույքները, որոնց վարքագիծը կախված է միջազգային ֆինանսական շուկայում առկա իրավիճակից և խիստ տատանողական է (գծապատկեր 11):

**Գծապատկեր 11. 6-ամսյա USD Libor-ի և Euribor-ի միջին ամսական դրույքաչափերի դինամիկան**



ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների կառուցվածքում 2009 թվականից արձանագրվել էր առևտրային վարկերի տեսակարար կշռի էական աճ: 2014 թվականի տարեվերջի դրությամբ առևտրային վարկերի տեսակարար կշիռը նախորդ տարվա նկատմամբ կրկին աճել է՝ 26.4%-ից կազմելով 28.8% (գծապատկեր 12):

**Գծապատկեր 12. ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների արտոնյալության դինամիկան 1999-2014թթ.**




Ներգրավված փոխառու միջոցների գծով իրականացված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է սույն հաշվետվության հավելված 4-ում:

## Կանխիկ հոսքերի կառավարումը

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գանձապետական միասնական հաշվի ընդհանուր միջոցները (գանձապետական միասնական հաշիվ և ժամկետային ավանդներ) կազմել են 106.6 մլրդ դրամ՝ 2013թ. 175.6 մլրդ դրամի դիմաց: 2014թ. ընթացքում միասնական հաշվի ընդհանուր միջոցների միջին օրական մնացորդը կազմել է 129.7 մլրդ դրամ, որից տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկում ներդրված ժամկետային ավանդների միջին օրական մնացորդը կազմել է 102.5 մլրդ դրամ:

Տարվա ընթացքում պետական բյուջեի կատարումը, ընդհանուր առմամբ, իրականացվել է կայուն ու կանխատեսելի հարկաբյուջետային միջավայրում: Տնտեսական աճի ծրագրված մակարդակից ցածր լինելու արդյունքում հարկային եկամուտների հավաքագրումը երկրորդ եռամսյակից սկսած ցածր է եղել նախորդ տարիների միջին հավաքագրման ցուցանիշներից, սակայն, միևնույն ժամանակ պետական բյուջեի ծախսերի կատարողականը ևս դանդաղել է՝ պայմանավորված լինելով հիմնականում կենսաթոշակային բարեփոխումների իրականացման հետաձգման հետ:

**Գծապատկեր 13. ԳՄՀ օրական մնացորդի և ընդհանուր միջոցների դինամիկան 2014թ. (մլն դրամ)**



**Գծապատկեր 14. ԳՄՀ միջին մնացորդը և ժամկետային ավանդների միջին մնացորդը (մլն դրամ)**




Ժամկետային ավանդների միջին մնացորդը 2013թ. համեմատ աճել է 21.5 մլրդ դրամով կամ 26.6%-ով, որը պայմանավորված է նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի (ինչը կազմում է ԳՄՀ-ի հիմնական մասը) եռամսյակային համամասնություններով նախատեսված ֆինանսավորումների պահանջի նվազման արդյունքում խնայողությունների աճով, ԾԻԳ-երի կողմից տարվա ընթացքում նախատեսված ծախսերի թերակատարումներով, ինչպես նաև 2014թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության կողմից 2013թ. սեպտեմբերի 19-ին 700 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով եվրապարտատոմսերի թողարկման հասույթի մեծ մասի ավանդադրմամբ:

**Աղյուսակ 9. ԳՄՀ ցուցանիշները (մլրդ դրամ)**

| | 2013 | 2014 |
|---|---|---|
| ԳՄՀ մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ | 175.6 | 106.6 |
| ՀՀ ԿԲ-ում ժամկետային ավանդների միջին օրական մնացորդը | 80.9 | 102.5 |
| ՀՀ ԿԲ-ում ներդրված ժամկետային ավանդների կառավարումից ստացված եկամուտը | 6.5 | 8.3 |

2014թ. ընթացքում ժամկետային ավանդների միջին կշռված տոկոսադրույքը նվազել է՝ 2013թ. միջին 9.1%-ի դիմաց կազմելով 7.36%: Այս պայմաններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավորապես ազատ միջոցների կառավարումից ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 8.3 մլրդ դրամ տոկոսավճար:

## Ռիսկերի վերլուծություն

Հաշվետվության այս մասում դիտարկվել են պետական պարտքի հետ կապված հիմնական ռիսկերը՝ շուկայական ռիսկերը (տոկոսադրույքի, արժութային, իրացվելիության և վերաֆինանսավորման) և գործառնական ռիսկերը:

Ինչպես նախորդ տարիներին, 2014թ. ևս ՀՀ ՖՆ-ն շարունակել է միջոցներ ձեռնարկել կառավարության պարտքի կառավարման հետ կապված ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ, որի արդյունքում ՀՀ կառավարության պարտքը մնացել է կառավարելիության շրջանակներում:

2014թ. հուլիսի 3-ի թիվ 700-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատեց 2015-2017թթ. ՄԺԾԾ-ն, որում ներառված է նաև ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2015-2017թթ. ռազմավարական ծրագիրը: Ռազմավարական փաստաթղթում սահմանվել են կառավարության պարտքի 2014թ. ծրագրային և 2015-2017թթ. կանխատեսումային ցուցանիշները:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2015-2017թթ. ռազմավարական ծրագրով որպես ուղենշային ցուցանիշներ են սահմանվել ՀՀ կառավարության պարտքի <<Մինչև մարում միջին ժամկետի>> և <<Դեֆիցիտի ֆինանսավորումը ներքին զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների)>> ցուցանիշները:

**Աղյուսակ 10. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ուղենշային ցուցանիշները 2014թ.**

| | Ուղենշային | Փաստ |
|---|---|---|
| Մինչև մարում միջին ժամկետ, (տարի) | 8 – 11 | 9.8 |
| Դեֆիցիտի ֆինանսավորումը ներքին զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների), (%) | ≥ 25 | 17.9 |

2014թ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման արդյունքում փաստացի ապահովվել է <<Մինչև մարում միջին ժամկետի>> ուղենշային ցուցանիշը, իսկ <<Դեֆիցիտի ֆինանսավորումը ներքին զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների)>> ցուցանիշի շեղումը հիմնականում պայմանավորված է եղել տարեվերջին արտաքին աղբյուրների հաշվին լրացուցիչ բյուջետային աջակցության երկու վարկերի ստացմամբ: ՀՀ դրամի կտրուկ արժեզրկման պատճառով իրացվելիության կրճատման արդյունքում պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի բացակայությունն էլ իր հերթին հանգեցրել է ներքին զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների) դեֆիցիտի ծրագրի ճշգրտման և սկզբնական ծրագրից պակաս ֆինանսավորման:

Ավելացնենք, որ ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրի նպատակներին համապատասխան (ներքին պարտքի տոկոսադրույքների նվազեցման նպատակով) 2014թ. պետական բյուջեի ծրագիրը կազմելիս դեֆիցիտի ֆինանսավորումը ներքին զուտ փոխառու միջոցներով պակասեցվել էր 19 մլրդ դրամով՝ 2013թ. սեպտեմբերին եվրապարտատոմսերի թողարկման արդյունքում մուտքագրված միջոցների հաշվին և ծրագրվել էր ուղենշային ցուցանիշից ցածր՝ 25%-ի փոխարեն 19.5%:

**Տոկոսադրույքի ռիսկ**

2014թ. տնտեսվել է պետական պարտքի սպասարկման համար պետական բյուջեով նախատեսված տոկոսավճարներից 1.76 մլրդ դրամ՝ հիմնականում արտաքին պարտքի մասով:

Աղյուսակ 11-ում ներկայացված են ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար/ՀՆԱ փաստացի ցուցանիշները՝ համեմատելով ՀՀ 2014թ. պետական բյուջեով հաստատված և 2015-2017թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով նախատեսված ցուցանիշի հետ:

**Աղյուսակ 11. ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճարները**

| | 2013 փաստ | 2014 ծրագիր | 2014 փաստ |
|---|---|---|---|
| Տոկոսավճար/ՀՆԱ (%) | 1.09 | 1.37 | 1.27 |

Կառավարության պարտքի աճին զուգահեռ աճում են նաև դրա հետ կապված տոկոսային ծախսերը: Փաստացի տոկոսային ծախսերը գտնվել են 2015-2017թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով թիրախավորված մակարդակում:

**Աղյուսակ 12. Պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման տոկոսադրույքները**

| | 2013 փաստ | 2014 փաստ |
|---|---|---|
| Տվյալ տարում տեղաբաշխված ՊՊ-երի միջին կշռված եկամտաբերությունը (%) | 12.60 | 9.78 |

2014թ. ընթացքում արձանագրվել է ներքին պարտքի ներգրավման նպատակով թողարկված պետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազում 2.82 տոկոսային կետով:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարման տեսակետից կարևորվում է լողացող տոկոսադրույքով պարտքի ծավալների աճի սահմանափակումը:

**Աղյուսակ 13. ՀՀ կառավարության ֆիքսված և լողացող պարտքի տեսակարար կշիռները**

| տոկոս | 2013 փաստ | 2014 ծրագիր | 2014 փաստ |
|---|---|---|---|
| ֆիքսված | 90.7 | 89.5 | 89.1 |
| լողացող | 9.3 | 10.5 | 10.9 |

2015-2017թթ. ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրում ՀՀ կառավարությունը լողացող և ֆիքսված տոկոսադրույքների տեսակարար կշիռների նպատակային մեծությունը 2014թ. վերջի դրությամբ առկա պետական պարտքում սահմանել էր 10.5/89.5 համամասնությամբ: Փաստացի, պետական պարտքի կառավարման արդյունքում ՀՀ կառավարությանը գրեթե հաջողվել է պարտքի կառուցվածքում ապահովել լողացող և ֆիքսված տոկոսադրույքով պարտավորությունների ծրագրային ցուցանիշները:

**Աղյուսակ 14. ՀՀ կառավարության պարտքի տոկոսադրույքի ռիսկերի ցուցանիշները 2014թ.**

| | 2014 ծրագիր | 2014 փաստ |
|---|---|---|
| ՀՀ կառավարության պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը (տարի) | 8.3 | 8.3 |
| արտաքին պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի) | 8.9 | 8.9 |
| ներքին պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի) | 5.2 | 5.6 |
| | | |
| Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության պարտքի կշիռը (%) | 14.9 | 15.0 |
| Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող արտաքին պարտքի կշիռը (%) | 14.0 | 14.2 |
| Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ներքին պարտքի կշիռը (%) | 19.2 | 18.8 |

ՀՀ կառավարությանը հաջողվել է պահպանել ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրով սահմանված տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշները:

**Փոխարժեքի ռիսկ**

Փոխարժեքի ռիսկի նվազեցման նպատակով ՀՀ ՖՆ-ն համաձայնագիր է ստորագրել ՀՀ ԿԲ-ի հետ, որի համաձայն, տարվա ընթացքում պետական պարտքի գծով արտարժութային վճարումները փոխարկվում են ՀՀ դրամի՝ հիմք ընդունելով համապատասխան տարվա ՀՀ կառավարության բյուջետային ուղերձում ներկայացված փոխարժեքները: Համաձայնագիրը կառավարությանը հնարավորություն է տվել ֆիքսել պետական պարտքի գծով արտարժութային վճարումների հետ կապված փոխարժեքները՝ դրանք դարձնելով ավելի կառավարելի: Համաձայնագիրը չի նվազեցնում արտաքին պետական պարտքի գծով երկրի ունեցած փոխարժեքի ռիսկը, այլ նման ռիսկերը կառավարության հաշվեկշռից տեղափոխում է ՀՀ ԿԲ հաշվեկշիռ՝ պետական բյուջեի կատարումը դարձնելով ավելի կանխատեսելի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կենտրոնական բանկի մասին օրենքի հոդված 12-ի 3-րդ մասի համաձայն, ֆինանսական տարվա արդյունքում ՀՀ ԿԲ ստացած շահույթի մնացորդը, օրենքով նախատեսված բոլոր մասհանումները կատարելուց հետո, փոխանցվում է պետական բյուջե, ՀՀ կառավարությունը շարունակում է անուղղակի կերպով կրել պետական պարտքի գծով արտարժութային վճարումների հետ կապված և փոխարժեքով պայմանավորված ռիսկերը:

ՀՀ դրամի փոխարժեքները 2014թ. (յուրաքանչյուր ամսվա միջինը) ներկայացված են գծապատկեր 15-ում:

**Գծապատկեր 15. ՀՀ դրամի փոխարժեքները ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 2014թ-ին**



Պայմանավորված ներքին և արտաքին տնտեսական զարգացումներով՝ 2014թ. տարեվերջին արտարժութային հոսքերի կտրուկ նվազման և գործընկեր երկրներում փոխարժեքի կտրուկ արժեզրկման (հատկապես ռուսական ռուբլու արժեզրկման) ազդեցությամբ պայմանավորված ՀՀ դրամը 2014թ. դեկտեմբերի վերջին օրվա դրությամբ 2013թ-ի դեկտեմբերի վերջին օրվա նկատմամբ արժեզրկվեց 14.6%-ով, և ձևավորվեցին փոխարժեքային ճնշումներ, ինչն էլ իր հերթին 84.7% արտարժութային պարտքի կշռի պայմաններում բացասական ազդեցություն ունեցավ կառավարության պարտքի ցուցանիշների, մասնավորապես՝ դրամով արտահայտված պարտքի ծավալի վրա:

**Աղյուսակ 15. ՀՀ կառավարության արտաքին պարտքը**

| | 2013 | 2014 |
|---|---|---|
| ՀՀ կառավարության արտաքին պարտք (մլրդ ՀՀ դրամ) | 1,375.4 | 1,588.9 |
| ՀՀ կառավարության արտաքին պարտք (մլն ԱՄՆ դոլար) | 3,390.8 | 3,345.3 |
| ԱՄՆ դոլարի փոխարժեքը տարվա վերջում | 405.64 | 474.97 |

Չնայած, որ 2014թ. վերջի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ նվազել է նախորդ տարվա նկատմամբ, սակայն ՀՀ դրամի արժեզրկման արդյունքում այն 15.5%-ով ավելին է եղել:

**Աղյուսակ 16. ՀՀ կառավարության պարտքի արժութային կառուցվածքը**

| | 2013 | 2014 |
|---|---|---|
| տոկոս | փաստ | փաստ |
| **Արժութային կառուցվածքը** | 100.0 | 100.0 |
| այդ թվում՝ | | |
| ՀՀ դրամով արտահայտված պարտք | 16.6 | 15.3 |
| արտարժույթով արտահայտված պարտք | 83.4 | 84.7 |
| այդ թվում՝ | | |
| USD | 26.8 | 30.2 |
| SDR | 42.4 | 40.9 |
| EUR | 7.0 | 7.2 |
| JPY | 7.1 | 6.3 |
| AED | 0.1 | 0.1 |

